

և իւր զաւակացն յերկար կ . . . » : Արձանադրութեան մնացեալ մասը անընթեռնլի է. ինչպէս նաեւ վերոնշանակեալ Կրայեցոյ բառը. իսկ Ծարկայ յատուկ անունն՝ Սաւալան կը կարծէ թէ՝ սխալ ընթերցման հետեւանք է. կրնայ ըլլալ Ծովկայ, տառերու նմանութեամբ. եթէ այդպէս ընդունինք, ամենայն հաւանականութեամբ ընծայաբեր վարդապետը կարելի կ'ըլլայ նկատել Շմուռն եպս. Ծովք գաւառին, որ 1307 ին ներկայ գտնուեցաւ Սոոյ Ժողովին. (Սաւալան, էջ 592): Ըստ Հաննէի, (էջ 96), Ս. Յակոբի Ս. Թորոս եկեղեցին շինել տուած է Լեւոն Գ. իր Թորոս եղբորը յիշատակին համար:

Ս. Յակոբի վանքին մէջ կը գտնուի Լեւոնի կնոջ Կեռան թագուհիին Ակների վանքին նուիրած մագաղաթեայ պատկերազարդ Աւետարանը, ընդօրինակուած ԶԻԱ (=1272) թուակառով, գրիչը՝ Աւետիս, նկարիչը՝ Թորոս Բոսլին: Գրչագրին յիշատակարաններէն յայտնի կ'ըլլայ թէ՝ ձեռագիրս քանիցս Ս. Յակոբի յիշատակ եղած է հետեւեալ կերպով. 1395 ին ուխտաւորութեամբ Ս. Յակոբ այցելող Ահարոն քհն. նոյն Աւետարանը կը նուիրէ Ս. Յակոբի՝ Սարգիս պտրք. ի օրով. յաջորդաբար Մարտիրոս պտրք. ՊՂ. (=1441) ին, Ստամպոլցի Ուսուփ ԶԾԸ (=1509) ին, մհտ. Յակոբ Հասան Քէֆէցի, ԶԿԶ (=1517) ին, յետոյ մի ուրիշ բարեպաշտ ԶԿԷ (=1518) ին, Սոոյ կաթողիկոս Յովհաննէս Թուրկուրանցին 1523 ին, օտարներէն ծախու կ'առնուն և յիշատակ կ'ընեն Ս. Յակոբի վանքին:

Գրիգոր պտրք. Շղթայակիր՝ ձեռագիրս ձուլածոյ ոսկեպատ կազմով զարդարել կուտայ 1727 ին, ըստ իր ինքնագիր յիշատակարանին. (Ազգ. Հան. 1910. Գիրք Ի, ԻԱ. էջ 18-32: ՄԶ. Թ. 532):

ԼԵՒՈՆ Դ. ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՅ.— Յաջորդ Հեթում Բ. ի ետրդի Թորոսի՝ եղբոր Հեթմոյ. (ՄԶ. Թ. 1822): Կիրակոս Արեւելցիի Յայաւառոյրը ունի Լեւոն Դ. ի ինքնագիր յիշատակարանը, որով ան այս գիրքը Քէրէքի (Մեռեալ ծովուն արեւելեան կողմը) Հայոց եկեղեցիին յիշատակ կուտայ ձեռամբ իր քեռորդւոյն Սիմանայ կրայի տիրոջ Պարոն Վասիլ Բազլէրին եւ Գրիգոր երէցին. ձեռագրին յիշատակարաններն ասոնք են. «Եւ Լեւոն թագաւորս ամենայն Հայոց. զպիտակս յամենայն գործոց